



U P U P U S

ພົບ ລ. — ຖຽນ ພ. 1883 ສູນ ພ. ສອບເຫຼຸ 31

ԿՐՈՆԱԿԱՆ

64

ՀՐԻԵՎՈՒՆ ԵՐ ԳՐԻՇՑՈՒՔԵՐԱՅՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՑՈՒՆԵՐԻ ՀՇՄԵՄԸ ՑՈՒԹԻՒՆ-

Ես անցեալ անգամ խոստացայ Հրէից տաճարի կազմակերպութեան եւ ծիսակատարութեան ու արարողութեանց համար խօսել. կատարումեմ խոստումն:

Միայն քերանացի աւանդական կրօնագիտութիւնը եւ առանց կազմակերպեալ ծիսակատարութեան կրօնական պաշտամունքը չեն կարող ազգային ամբողջութեան մի կապ լինել: Առվես գիտէր այս ուստի անտառապահ-ը թափառելու ժամանակ՝ աշխատեց այս պակասը լրացնել: Ծխական արտարտութեանց ոկիզրը եղաւ Հրէից Եգիտուսից ազատուելու յիշատակը. եւ է նոցա առաջին տօնը: Այդ յիշատակը, որ Պատէք կամ Զատիկ Տեառն է կոչվում՝ կատարվումէր այսպիսի պատրաստութեամբ.

չորս օր առաջ (ամսոյ տառակի) իւրաքանչիւր տուն մի մի արու տարեկան գառն պէտքէ պատրաստէին չորրորդ օրը (ամսոյ 15) պէտքէ մորթէին, արխինը գրան սեմերի ու բարաւորների վերայ քսէին, իսկ մորթածը խորովէին եւ իրիկնապահին գոտին մէջքին կապած, կոշիկները ոտերին եւ ձեռնափայտը ձեռքերին շուտ շուտ ուտէին. (Ելից գլ. ԺԲ. ԻՊ. 5—6): Պատէքից յետոյ Բ. տօն է Բաղարջակերաց տօնը. այդ տօնին նոքա պէտք է եօթն օր բազարջ ուտէին. խմնրուն հաց պէտքէ նոցա տանը ըրգանուէր եւ ոչ օտարի համճր, եւ այս իսկ պատճառով էլ այս տօնը Բաղարջակերաց տօն է կոչվում. եւ Բաղարջակերաց օրերը Աստուծոյ նուիրած լինելով՝ Հրէաները սուրբ պէտք է պահէին եւ համախմբուած՝ Աստուծոյ (իրանց ազգին արած) բարութիւնները պէտքէ պատմէին: Խնձորէս Պատէքի, նոյնուէս եւ Բաղարջակերաց տօնը Հրէաները յաւիտեան պէտքէ տօնէին իրեւ իրանց ազատութեանը յիշատակ, եւ նոցա տարեգլուխը պէտքէ համարուէր Ապիա (կանխոց) ամիսը. (Ելից գլ. Լ. Վ. 18): Մինչեւ Բաղարջակերաց ու Պատէքի տօները, Հրէայք միայն մի համազգային նշան ունէին, այնէ թլպատութիւնը՝ որ սկսուեց նոցա առաջին նահապետից՝ Արքահամից (Մննդ. գլ. ԺԷ. 10—14) իբրեւ ուխտ Աստուծոյ եւ Արքահամի ու նորա ազգի մէջ յաւիտեան: Թլպատութիւնը պէտքէ կատարվէր ամեն ուժնօրեայ արու մանուկների վերայ: Ուրեմն Հրէաների համազգային նշանը պէտք է համարել նտի՛ թլպատութիւնը Արքահամից մինչեւ Մովսէս. իսկ Մովսէսի ժամանակով՝ եւ այնուհետեւ առաջին տօնը՝ Եգիպտասից գուրս գալու յիշատակը՝ իբրեւ տարեգլուխ: Երրորդ տօնն է Պենտէկոստէի կամ Յիսոներորդի տօնը, որ կատարումէին Պատէքից կամ Եգիպտասից գուրս գալու յիշատակի յիսուներորդ օրը, երբ Աստուծած Սինայի անապատում Մովսէսի ձեռքով իւր պատուէրները յայտնեց ժողովրդին: Այդ տօնին ժողովուրդը պէտք է պատրաստուէր ներքին եւ արտաքին մաքրութեամբ եւ լուացմամբ երեք օր առաջ, իսկ խոստացեալ երկիրը մոնելուց յետոյ՝ հունձքի, անասնեղինաց եւ այլ նուէրներ պէտք է անէին տաճարին եւ քահանային (Երեխայրիք). (Ելից ԺԹ. Ղեւու ԻՊ. 16—26):

Չորրորդ տօնն է քաւութեան տօնը, որ եօթներորդ ամսի տասներորդ օրը պէտքէ կատարուէր սուրբ պահելով նոյն օրը

բոլոր աշխատանքներից: Հինգերորդն՝ Տաղաւարահարաց տօնը, որ պէտքէ սկսուէր եօթներորդ ամսի 15 ից: Եօթն օր ժողովուրդը ծառի սստերից շինած տաղաւարների մէջ պէտք է ընակէր եւ ուրախութեան տօն կատարէր՝ ի յիշատակ անապատի մէջ թափառման ժամանակ վրանաբնակ լինելուն. (Դեւ. ԽԳ. 34—44): Վեցերորդն է Նարամիր, որ եօթներորդ օրը ժողովուրդը սուրբ պէտք է պահէր ի յիշատակ աշխարհի վեցօրեայ ստեղծագործութեան եւ Աստուծոյ՝ եօթներորդ օրը հանգստանալուն (Ելից Ե. 2—4. Դեւտ. ԽԳ): Բացի սորանից ամեն եօթներորդ հրէից համար սուրբ էր, Հրէայք իրանց ազգային բարերարներին յիշելու համար՝ նոցա մահուան օրը տօնումէին սուդ պահելով եւ նոցա վարքագրութիւնը կարդալով. օր. Մովսէսի եւլն. այլ եւ սուդ երուսաղէմի առման եւ աւերման համար եւլն:

Հրէից Զատկի տօնին մենք տօնումենք Յիսուսի Յարութեան տօնը: Հրէից Զատկական գառը եւ նորա արիւնով սեմերի ու բարաւորների օծելը յիշեցնումէ նոցա ազատութիւնը սատակից հրեշտակի կոտորածից եւ Եգիպտական ծառայութեան երկրից. իսկ Յիսուսի խաչի վերայ թափած արիւնը մեզ յիշեցնումէ մեր ազատութիւնը կուտաշտութեան խաւարից. եւ Յիսուսի փառաւոր Յարութիւնը առհաւատչեայ է մեր յաւիտենական կեանքին:

Հրէից եօթնօրեայ Բաղարջակերաց տօնը յիշեցնումէ նոցա Եգիպտոսից դուրս գալը, Կարմիր ծովը անցնելը եւ այդ ժամանակի՝ նոցա ուտեստի պաշարը: Եւ որովհետեւ Յիսուս Քրիստոս այդ Բաղարջակերաց տօնին ի յիշատակ լինքեան տուեց աշակերտներին ի տեղի իւր մարմնոյ՝ բաղարջ հաց, եւ ի տեղի իւր արեան՝ անապակ բաժակ. Հայոց Եկեղեցին սրբութեամբ ընդունեց այդ պատուէրը եւ կատարումէ Հօր ի հաշտութիւն՝ պատարագելով թարմ բաղարջ հաց՝ եւ անապակ գինի:

Հրէից Պետակոստէի տօնը յիշեցնումէ Աստուծոյ պատուիրանագրութիւնը Հրէից ազգին Սինայի անապատում. այդ օրը մեզ յիշեցնումէ Ա. Հոգու գալուստը վերնատան մէջ առարեալներին մխիթարելու եւ բոլոր աշխարհին Աստուծոյ օրէնքը սորվեցնելու եւ շնորհքը տալու համար:

Քառութեան եւ Տաղաւարահարաց տօները յիշեցնումէին Հրէից՝ անապատում վրանաբնակ լինելը, իսկ Վարդավառի տօնը

յիշեցնումէ մեզ Քրիստոսի այլակերպութիւնը եւ աստուածացին փառքով իւր աշակերտներին երեւելու գեղքը նաեւ հին տապահակի եւ Քրիստոնէական եկեղեցու հիմնարկութեան տօնը. յիշեցնումէ որ քրիստոնեաներս պէտքէ ի բաց թօթափենք մեր չարութիւնները եւ Յիսուսի լուսափայլ վարդապետութեամբ դաստիարակուած՝ առաքինանանք:

Նարաթը Հրէից սուրբ օրն էր, նուիրեալ Աստուծոյ. իսկ շաբաթի տեղ մենք ունինք կիւրակէն՝ որ նշանակումէ տէրունական, եւ այդ օրը նուիրեալ է Աստուծոյ ի յիշատակ Յիսուսի յարութեան եւ Ա. Հոգւոյ գալստեան:

Պլպատութեան խորհօնութը յիշեցնումէ Աստուծոյ ուխոտը Աբրահամին, թէ Աբրահամը այդ ուխոր պահելով մեծ ազգ պէտք է զառնայ եւ թլպատութիւնն էր հրէաների համար ազգային յատկանիշ: Դորա տեղ Մկրտութիւնը յիշեցնումէ մեզ՝ մեր որդեգրութիւնը Աստուծոյ. — եւ Քրիստոսի վարդապետութեան բոլոր հետեւողներին, թէեւ լինէին դոքա զանազան ազգութեան պատկանող՝ միայնումէ մի սուրբ անուամբ եւ եղբայրական յարաբերութեամբ:

Հրէայք իրանց բարերարների յիշատակը տօնումէին սգալով նոցա մահը եւ նոցա վարքագրութիւնը կարդալով. նոյնը մենք անումենք մեր ազգի եւ եկեղեցու բարերարների յիշատակը տօնելով եւ նոցա վարքագրութիւնը ընթեռնով:

Իսկ եթէ քրիստոնէական եկեղեցին պէտք է հրէականին հետեւելով անէր, ինչ որ այժմ անումէ, անշուշտ պէտք է, հետեւեալ պատճառներով. —

Նախ՝ որ մեր կրօնի վարդապետն Յիսուս Քրիստոս այդ տեսակ տօներին միշտ նշանակութիւն տալով ինքն մասնակցել է տօներին.

Ա. Զատկական գառը ուտելիս կամ Պատերի տօնը կառարելիս պատուիրել է իւր փրկագործութիւնները յիշելու համար կատարել այն՝ ինչ որ իրեւ կատկ աւանդեց իւր աշակերտներին. այսինքն Հացի բեկաննելը եւ Ոտնալուան; Աւետարանից երեւումէ որ Յիսուս Քրիստոս ոչ միայն տօները աւելորդ չէր համարում; այլ աւելի կարեւորութիւն էր տալիս՝ յատկապէս այդ օրերը կատարելով իւր երկրաւոր կեանքի փրկագործութիւններն:

Թողնենք այն որ զգայականը միշտ աւելի մեծ ազդեցութիւն ունի քան իմացականը, եւ այս բանը իմացել են ամենամեծ օրէնսդիրներն:

Հըեւական Եկեղիքն և նորա պաշտամունչը:

Հրեից համազգալին ազօթատեղին՝ քանի որ նոքա հաստատուն ընակավայր չունեին, եւ այնուհետեւ մինչեւ թագաւոր եւ մայրաքաղաք ունենալը, մինչեւ Սոլոմոնը, մի վրան էր երեք բաժանմամբ (Ելից 1.6.—10.) ըստ այսմ — Ա. Արքութիւն սրբոց, որտեղ էր տապանակ ուխտին, որի վերայ միմեանց հանդէպ թեւատարած դրուած էին երկու քերովքները: Այդ տապանակի մէջ գլունը/ումէին երկու քարեզէն տախտակները, մանանայի ոսկի սափորը, Աշարօնի ծաղկեալ գաւազանը եւ յետոյ՝ Մովսէսի հընգամատեանը. վարագոյրներով անջատուած էր այս մասը: Բ. մասում դրուած էին հիւսիսային կողմը՝ առաջաւորաց հացերի սեղանը, հարաւային կողմը՝ եօթնաջահեան աշտանակի սեղանը, իսկ տապանակի վարագուրի հանդէպ՝ խնկոց սեղանը: Այս մասն եւս վարագոյրներով բաժանուած էր: Գ. մասնում դրուած էին դրան մօտ ողջակէզի սեղանը իւր պարագայիւր: Այդ մասում դրուած էր նաեւ լուացման աւազանը, ուր սրբազնագործ պատօնեայք պէտքէ իրանց ձեռքերն ու ոտքերը լուային: Վկայութեան խորանը ունէր նաեւ սրահ: Եւ վկայութեան խորանի բոլոր սրբութիւններն ու կահկարասիքը օծուած էին օձման իւղով. (Ելից 1. 26):

— Օծման իւղը պէտքէ լինէր պատրաստուած ձէթից (ձիթենի), զմըռոսից, կինամոմոնից, խնկեղէզնից եւ կասիայից յատկացեալ չափերով (Ելից 1. 22—25):

— Խունկը յատկացեալ պատրաստութեամբ՝ միայն վկայութեան խորանի մէջ պէտքէ գործածուէր. (Ելից 1. 34—38):

— Ճրագլուխի եղը ձէթ պէտքէ լինէր եւ ժողովուրդը պիտի տար, իսկ քահանայք պէտքէ վառէին վկայութեան առաջը (Ելից 1. 20):

— Վկայութեան խորանի սպասաւոր կամ պաշտօնեայ ընտրուեցին Դեւիի ցեղից Մովսէսի եղբայր Աշարօնը եւ իւր սրգիքը յազգէ յազգ. աւագագոյնը քահանայապետ պէտքէ լինէր, իսկ մնացեալքը քահանայ պէտքէ կոչուէին. (Ելից 1. 41.)

Աշարօն եւ իւր յաջօրդները պէտքէ ունենային յատկացեալ զգեստ, որ կոչվումէ պատուայ եւ փառաց, սոքա են—լանջապահակ՝ որի վերայ չորս կարգ երեք երեք ակների վերայ պէտքէ փորսգրուած լինէին Խորայէլացւոց ցեղերի անունները. (Ելլից ԵԲ.): Եփուտ՝ որի ուսերի վերայ եկած տեղերը պէտքէ մի մի եղնդնաբարեր լինէին՝ իւրաքանչիւրի վերայ Խորայէլացւոց ցեղերից վեց մեց անուն գրուելով, Պատմուման՝ որ պայծառ գունաւոր անկուտածներից ոսկեթել բանուած պէտքէ լինէր եւ փորանկեալ դրութիւն ունենար, միայն գլուխը անցկացնելու պատուածքով. Քղանցքը պէտքէ բոժոժներով զարդարուած լինէր, եւ այս զգեստը պէտքէ հագնէր քահանան Արքութիւն Սրբոյ մանելու համար. Եապիկ՝ որ դարձեալ նրբաթել նկարագործ պէտքէ լինէր. Խոյր՝ որի ճակատին պէտքէ մի ոսկեայ թիթենի վերայ Արքութիւն Տէսուան բառերը գրուած լինէին. Նոյն պէս Գօտին պէտքէ նկարագործ լինէր: Աշարօնի որդւոց համար (քահանայից համար) պէտքէ շապիկներ, գոտիներ լինէին, եւ փառաց ու պատուի համար՝ ապարօններ: Աշարօն եւ իւր որդիքը քահանայանալու համար պէտքէ օծուէին ու օրհնուէին: Խակ քահանայութեան պաշտօնը կատարելու համար 25—50 տարեկան պէտքէ լինէին (Թուոց գլ. Բ.): Քահանայք պէտքէ առանձին պարտապմանք չունենային՝ բացի կրօնի պաշտամունքից:

— Հրեայք սուրբ եւ անսուրբ կենդանիների մի օրէնք ունէին, որով բաժանվումէին խառնակեր այլազգիներից, խակ սուրբ կենդանիները ըստ այսմ կարելի էր դասաւորել.

Ա. Բոլոր չորքոտանիները՝ որոնք կճշակաբաշխ են եւ որոճումնեն:

Բ. Բոլոր թուջունները՝ որոնք կարթակառուց եւ մագլաւոր չեն.

Գ. Բոլոր ջրային կենդանիները՝ որոնք թեւ ու թեփ ունին.

Խակ զեռունների մէջ նոքա՝ որոնք շարժելիս թռչկոտում եւ սոսոսոտումնեն ու ազգը ունին, որպիսին են մարախը եւն. (Դեւ. ԺԱ.):

— Որգեծնութեան գէպքում, արու մանուկը եօթներորդ օրը պէտքէ թլպատուէր եւ թլպատութիւնից յետոյ ծննդեան քառամներորդ օրը մայրը իւր սրբուելու համար պէտքէ ներկայանար խորանին ու մի տարեկան գառն կամ մի աղաւնուձագ կամ տատրակ պէտքէ տար քահանային զոհելու համար,

իսկ աղջիկ զաւակի ծննդաբերութեան սրբութեան օրերը վաթ-սուն եւ վեց օր պէտք է լինէր, որից յետոյ մայրը զաւակի հետ պէտքէ ներկայանար խորանին այն պատրաստութեամբ՝ ինչ որ տղայի համար յիշուած է. (Ղեւ. ԺՅ.):

Հրէական եկեղեցին եւ պաշտամունքը եղան քրիստոնէական եկեղեցու եւ նորա պաշտամանց նախագաղափարը, որի մասին իւր ժամանակին կը խօսեմ:

ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅՈՒՆՈՍՈՆԻ ԱՊԱՏԱՄՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ:

(ԱՐԴՅՈՒՆ. ԴԵ Թ. Զ. 1885.)

Ի բ բ ա հ ի մ փ ա շ ա յ ի յ ա ր ձ ա կ ո ւ մ ը Մ օ ր է ա յ ի վ ր ա յ
1824—1825. Թողնենք մեկուսի այս թշուառ խոռվութիւններն և գառ-
նանք վերստին դէպի ազատութեան պատերազմը, երբ Մեսոլոնգին յետ
վանեց Օմէր Վրիօնու յարձակումներն, Սկութարի փաշան զօրաժողով
արաւ Քալմացիայի մէջ, Օմէր Վրիօնին էլ բազմաթիւ նոր գնդեր հա-
ւարեց Էպիրոսի կողմերում, մինչդեռ մի քաջ սպառազինուած նաւա-
տորմ էլ գալիս էր սաստել Յունաստանի ափերին և կղզիներին. Օմէր
Վրիօնին յառաջ խաղաց Արտայի վրայով, իսկ Սկութարի փաշան Ա-
քէլոսեան ձորի միջով Այդ միջոցին աւասիկ մի յանդուզն վճիռ տե-
սաւ Մարկոս Քոցարիս՝ յարձակուելու մի փոքրիկ վաշտով վերջին փա-
շայի զօրքերի դէմ, և մի քանի Էտոլեան լեռնարնակ զինուորներ իւր
կողմը զրաւելուց յետոյ գիշերուայ մէջ, երբ թշնամին իջևանած էր
Կարպէնիցի անձուկ հովտում, Եեղակարծում խուժմամբ ընկաւ նորա-
րանակի վրայ. Վսեմ քաջագործութիւն, որ գժրախտարար գնուելու
էր երիտասարդ հերոսի թանգ մահուամբ (21 Օգոստ. 1823). Օմէր
Վրիօնին միացաւ Մուսթայի փաշայի հետ, Սոքա զրոհ տուին դէպի
Անատոլիկօ, բայց այս կղզիական փոքրիկ քաղաքն ամրող մէկ ամսու-
կէս ընդունայն պաշարելուց յետոյ՝ նորա և Մեսոլոնգու արիասիրա զի-
մայրութիւնից, պարէնի պահանութիւնից և աշնանային յորդ անձրեից
գժուար կորուստներ կրելով, ստիպուեցան գառնալ դէպի հիւսիս. Ըն-
տանի երկպատակութեամբ պարտասուած պատերազմը նորից ոյժ առաւ
1824 և 1825 թուականներին եգիպտոսի Մեհմետ փաշան, որ վազուց